

**«ԼՂՅ (ԱՐՑԱԽԻ) 25-ԱՄՅԱ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԶԵՌԵԲԵՐՈՒՄՆԵՐՆ ՈՒ
ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

միջազգային երիտասարդական գիտաժողով

15-18 սեպտեմբերի 2016թ.

Արցախ (ԼՂՅ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«25-ЛЕТИЕ ГОСУДАРСТВЕННОСТИ НКР
(АРЦАХА):**

ДОСТИЖЕНИЯ И СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ»

международная молодёжная конференция

15-18 сентября 2016г.

Арцах (НКР), г.Степанакерт

СБОРНИК МАТЕРИАЛОВ

ԱԵԳԱՄ-ՕՄՍԱ

ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ

2016

Յրատարակության Երաշխավորվել Ստեփանակերտի Մերուպ Մաշտոց
համայնքանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Мащтоц г.Степанакерта

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

Լ 657

Խմբագրական խորհուրդ

ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադ. **Գ.Ս.Ղազինյան** (նախագահ), փ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ **Ա.Ս.Մանասյան**, հ.գ.դ., պրոֆ. **Հ.Ս.Ավամեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վ.Ռ.Բալյայան**, ի.գ.դ. **Վ.Վ.Գրուզդև**, ի.գ.դ., պրոֆ. **Ա.Յ.Խաչատրյան**, բ.գ.դ., պրոֆ. **Մ.Ս.Մարգարյան**, բ.գ.դ. **Ս.Մ.Ավամեսյան**, տ.գ.դ., պրոֆ. **Յ.Լ.Սարգսյան**, պ.գ.թ., դոց. **Ն.Է.Քաղդասարյան**, բ.գ.թ., դոց. **Խ.Ս.Գալստյան**, տ.գ.թ., դոց. **Ե.Ռ.Յայրիյան**, ի.գ.թ. **Ա.Յ.Նարությունյան**, ի.գ.թ., դոց. **Ա.Ա.Մանասյան**, ի.գ.թ., դոց. **Ս.Գ.Պետիկյան**

Редакционная коллегия

д.ю.н., проф., акад. НАН РА **Г.С.Казинян** (председатель), д.ф.н., проф., член кор. НАН РА **Ա.Ս.Մանասյան**, д.п.н., проф. **Գ.Մ.Ավանեսյան**, д.и.н., проф. **Վ.Բ.Բալայն**, д.ю.н. **Վ.Բ.Գրզծեա**, д.ю.н., проф. **Ա.Գ.Խաչատրյան**, д.п.н., проф. **Մ.Մ.Մարգարյան**, д.п.н. **Ս.Մ.Մինասյան**, д.э.н., проф. **Գ.Լ.Սարգսյան**, կ.и.ն., доц. **Ն.Է.Բագդասարյան**, կ.п.н., доц. **Խ.Ը.Գալստյան**, կ.э.н., доц. **Ե.Ռ.Այրիյան**, կ.ю.н. **Ա.Գ.Արյունյան**, կ.ю.н., доц. **Ա.Ա.Մանասյան**, կ.ю.н., доц. **Ս.Գ.Պետիկյան**

Լ 657 «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու – Եր.: ԱԵԳՄՄ, 2016, 320 էջ:

Ժողովածում ներառված են «ԼՂՅ (Արցախի) 25-ամյա պետականության ձեռքբերումներն ու արդի մարտահրավերները» խորագրով միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборнике включены материалы международной молодёжной научной конференции «25-летие государственности НКР (Арцаха): достижения и современные вызовы».

ՀՏԴ 94(479.25):32.001:342:06

ԳՄԴ 63.3 (53)+66.0+67.400

ISBN 978-9939-1-0465-2

© Արցախի երիտասարդ գիտնականների և
մասնագետների միավորում, 2016

ԼՂՅ ՊԵՏԱԿԱՆԱՃԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՆԱԿԱՆՈՒ ԱՐԴԻՎԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Սուլեն ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՅ պետական կառավարման ակադեմիայի
քաղաքական կառավարման և քաղաքական
վերլուծության ամբողության ասպիրանտ
surenpetrosyan10@gmail.com

Գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Մարիամ Մարգարյան

Յիմսավորված է մոտեցում համաձայն որի ԼՂՅ պետակաշինությունը ենթադրում է քաղաքական համակարգի բնականու արդիականացում: Այս համատեքստում կարևորված է քաղաքական սոցիալականացման, հաղորդակցության, հավաքագրման փոխայմանավորվածությունը, որի շրջանակներում պետականաշխնության համար պատասխանատու են քաղաքական համակարգի բոլոր դերակատաները: Առաջարկված է այս բազմամակարդակ գործընթացում արտաքին և ներքին մարտահրավերներին պատասխանել՝ բարձրացնելով լեգիտիմության և ինքնիշխանության մակարդակը:

Զաղաքական համակարգի զարգացման, կերպափոխման և բնականու արդիականացման կարողությունով է պայմանավորված նոր անկախացած պետության արդյունավետության և հասարակության կենսունակության աստիճանը: Ավելացնելով, որ արդի քաղաքական զարգացման հիմքում ընկած պոստմոդերն արժեքաբանության տիրույթում մարտահրավերներին անհրաժեշտ է ոչ միայն համարժեք պատասխանել, այլ նաև նետել մարտահրավերներ պետության ինքնիշխանության համար ապահովելով անհրաժեշտ աստիճանակարգային և ցանցային տարածություն: Այս գործընթացում որոշիչ է քաղաքական համակարգի բնականու արդիականացման հրամայականը՝ հիմնվելով ինչպես փոփոխվող միջավայրի որակական առանձնահատկությունների, այնպես էլ համակարգի ինքնակազմակերպման նոր հատկանիշների բացահայտման վրա: Այս նկատառումներով նպատակահարմար ենք համարում ԼՂՅ պետակաշինությունը դիտարկել որպես քաղաքական համակարգի բնականու արդիականացման գործընթաց:

Զաղաքական գիտության մեջ տեղ են գտել քաղաքական համակարգի տարրեր բնորոշումներ.

- Հասարակության քաղաքական համակարգը բոլոր ինստիտուտների ընդհանությունն է, որոնք մասնակցություն են ունենում պետականորեն կազմակերպված իշխանության իրականացման և ծևավորման մեջ:

- Զաղաքական համակարգը քաղաքական ինստիտուտների, հասարակական կառույցների, նորմերի և արժեքների, ինչպես նաև դրանց փոխգործակցության ընդհանությունն է, որոնց միջոցով իրականացվում է հանրային կառավարումը և պետական իշխանությունը:

• Քաղաքական համակարգը հասարակության քաղաքական կյանքի փոխկապակցված կառուցերի ընդհանրությունն է: Որպես այդպիսին այն իր ինստիտուտների միջոցով պահպանում է հասարակության քաղաքական կայունությունը¹: Նշված սահմանումներից ակնհայտ է որ քաղաքական համակարգի կառուցվածքում գերակա են հինգ Ենթահամակարգեր՝ ինստիտուցիոնալ, կարգավորող, ֆունկցիոնալ, հաղորդակցական և գաղափարախոսական: Պետությունը որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ ապահովում է սահմադրական կարգը և հանրային շահով պայմանավորված քաղաքական գործառույթներ է իրականացնում: Այս բազմավեկտոր գործառույթներն իրականացվում են պետական ինստիտուտների (պառամեստ, բյուրոկրատիա, վարչական հաստատություններ և դատարաններ) կողմից²: Տվյալ կառուցերը իրականացնում են գործառույթներ, որոնք իրենց հերթին ինքանակորություն են տալիս բարձրացնել իշխանության իրականացման մշակույթը շահային խմբերի, քաղաքական կուսակցությունների և այլ կառույցների հետ³: Քաղաքական համակարգի ինստիտուտները պայմանավորված քաղաքական ժամանակով և տարածությամբ կարող են ընականոն արդիականացման երաշխավոր լինեն եթե կարևորեն հետևյալ երեք հիմնական գործոնները.

Քաղաքական սոցիալականացում, որում ներգրավված են ընտանիքը, դպրոցը, զանգվածային լրատվական միջոցները, եկեղեցին և քաղաքական կառուցվածքի բազմազանությունը, որոնք քաղաքականորեն ստեղծում, վերարտադրում, ամրապնդում և կերպափոխում են **արժեքային և շահային կողմնորոշիչները**: Յատկանշական են S. Պարունակի՝ «մշակութային համակարգը իրականացնում է և պատասխանատու է ինչպես ստեղծագործական վերակազմավորման այնպես էլ օրինակի պահպանան և վերարտադրման գործառույթի համար», և Պ. Բուրդիեի՝ «Յարիտուսը ապահովում է սոցիալական ինստիտուտների վերարտադրողականությունը: Ինստիտուտի կառուցվածքը ընդգրկվում է անհատի ներքին կառուցվածքում և արդյունքում հետագայում վերարտադրվում և արտահայտվում է նրա գործողություններում⁴»: Վերոնշյալը արտացոլում է համակարգ-համակարգ, համակարգ-միջավայր ամուր փոխգործակցության անհրաժեշտությունը հստակ սահմանված արժեքաբանության և կողմնորոշիչների հիման վրա: **Քաղաքական հաղորդակցություններ** տեղեկատվության շարժն է հասարակության և քաղաքական համակարգի մաս կազմող տարրեր կառուցվածքների տիրույթներում: Այս համատեքստում Կ. Դյուզ քաղաքական համակարգը բնութագրում է որպես տեղեկատվա-

¹ Политическая наука: новые направления Под ред. Р.Гудина и Х.-Д. Клингеманна Науч. Ред. Е.Б. Шестопал М.: ВЕЧЕ, 1999, с. 45, 56, 74, 89.

² Г. Алмонд, Дж. Пауэлл, К. Стром, Р. Даитон. Сравнительная политология сегодня: мировой обзор, пер. с англ. А.С.Богдановского, Л.А.Галкиной; Под ред. М.В.Ильина, А.Ю.Мельвилля. — М: Аспект Пресс, 2002, с. 99

³ Տե՛ս նոյն տեղում, էջ 110

⁴ Бурдье П. Социология политики / Пер. с фр.; сост., общ. ред. и предисл. Н. А. Шматко. — М.: Socio-Logos, 1993,

հաղորդակցական հոսքերի ցանց և առանձնացնում քաղաքական հաղորդակցության երեք հիմնական ծև՝ 1) անձնական, ոչ Փորմալ (face to face), 2) հաղորդակցություն կազմակերպության միջոցով և 3) հաղորդակցություն ՇԼՍ-ների միջոցով¹:

Քաղաքական հավաքագրում, որը Ենթադրում է կադրերի ընտրություն քաղաքական գործունեության իրականացման և պետական պաշտոնների գրանցման համար: Այսուեղ կարևորվում է ինչպես ինստիտուտների կայացվածության աստիճանը և Նրանց գործունեության հիմքում ընկած իրավական և արժեքային կողմնորոշչիները, այնպես էլ հասարակությունում առկա համերաշխության ծևն ու տեսակը:

Դաշվի առնելով Վերոնշյալը և այլ պրոեկտելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրինակի վրա հարկ է փաստել, որ քաղաքակրթությունների խաչմերուկում գտնվող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինելով համաշխարհային տնտեսական կենտրոններից հեռավորության և դժվար հասանելիության, տրանսպորտային Ենթակառուցվածքների զարգացման համար անբարենպաստ լեռնային դժվարանցանելի լանդշաֆտի, ընդգծված ցամաքային կիմայի, սահմանափակ ընական ռեսուրսների, հակամարտության կարգավորված չլինելու պատճառով մշտական պատերազմական իրավիճակում և բազմաթիվ այլ հանգամանքների ու գործուների առկայության պայմաններում կենսական նշանակություն ունի քաղաքական համակարգի ընականու արդիականացման ապահովումը, որպես պետության զարգացման և անվտանգության ապահովման կարևորագույն դերակատար:

Քաղաքական համակարգի արդյունավետությունը կախված լինելով միջավայրի և այլ Ենթահամակարգերի հետ ռեսուրսների փոխանակման հավասարակշռությունից Ենթադրում է ոչ միայն մարտահրավերներին համարժեք պատասխանելու կարողությամբ, այլ նաև քաղաքական համակարգի արդիականացմամբ պայմանավորված մարտահրավերների նետմամբ, որը պետք է ուղեկցվի ստացված արդյունքի ռազմավարական կառավարման հստակ տեսլականությունով:

Այս համատեքստում ԼՇ պետականաշխության գործընթացում քաղաքական համակարգի ընականու արդիականացումը ընդունելի Ենք համարում S. Պարտուսի AGIL համակարգի շրջանակներում, որտեղ A(adaptation)- աղատացիա- համակարգի համարժեք արձագանքն է արտաքին միջավայրի պահանջներին, G (goal attainment)- նպատակների իրականացում- համակարգի կողմից նպատակների սահմանումը և դրանց իրականացումն է, I (integration) -ինտեգրացիա - համակարգի բոլոր մասնիկների փոխգործակցության կորդինացումը և L(latency) - լատենտություն - անհատի շահադրդման, մշակութային օրինակի վերատադրման և պահպանման ուղղված գործողությունների ամբողջու-

¹Deutsch K : The Nerves of Government: Models of Political Communication and Control. New York, 1963

թյունը, (Legitimacy) - գործընթացների իրականացում լեզիտիմության շրջանակներում¹:

Իշխանությունը և նրա գործունակությունը, որպես քաղաքական համակարգի կարևորագույն դերակատար կախված է նրա կողմից տիրապետվող ինչպես քանակական և որակական նյութական ռեսուրսներից այսպես էլ քաղաքացիների լոյալության աստիճանից, որտեղ հատկանշական է ԼՂՀ ժողովորդի ինքնորոշման պահանջի բարոյաքաղաքական լեզիտիմությունը պատմական հեռանկարում².

Քաղաքական համակարգի արդիականացման շրջանակներում հարկ է նշել նաև հասարակությունում երկու չափորոշիչների միաժամանակյա ժողովրդավարացման մասին՝ բնակչության կտրուկ աճի ապահովում և սոցիալական երկխոսության հումանիզմացում:

Ամփոփելով շարադրվածը հարկ է նշել, որ քաղաքական համակարգի արդիականացումը, որպես հասարակական կյանքի կազմակերպման, պետության զարգացման և անվտանգության ապահովման գրավական պետք է իրականացվի համագործակցային և ժողովրդավարական արժեքաբանության հիման վրա՝ իշխանության իրականացման վառ արտահայտված լեզիտիմության սկզբունքներով։ Քաղաքական փոխակերպումների համատեքստում հայ հասարակությունն արդի մարտահրավերներին նպատակամետ պատասխանելու ակնկալիքով խնդիր ունի նոր գիտելիքներով հարստացնել հանրային և քաղաքական կառավարման գործընթացը՝ բարձրացնելով իշխանության իրականացման մշակույթի լեզիտիմությունը³։ Լեզիտիմացումը, որպես բնականու արդիականացման գործկթաց ընդունելու հայ հասարակությանը հնարավորություն կտա նորմավորել իշխանական հարաբերությունները և սահմանադրահրավական, և բարոյահոգեբանական կարգի մեջ։

¹Парсонс Т. Система современных обществ/Пер., с англ. Л.А. Седова и А.Д. Ковалева. Под ред. М.С. Ковалевой. — М.: Аспект Пресс, 1998, 280с.

²Օստան Լուստերիանդտ. ԼեռնայինԴարաբաղի ինքնորոշման իրավունքը, Մաս 1 <http://diskurs.am/2016/07/854/>

³Մարգարյան Մարգարյան քաղաքական իշխանության լեզիտիմությունը՝ ՀՀ ժողովրդավարական համախմբման գործոն, <https://mm margaryan.wordpress.com/page/2/>

Սուրեն Պետրոսյան

**ԵՂՅ ՊԵՏԱԿԱՆԱԾԻՆՈԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԶԱՄԱԿԱՐԳԻ
ԲԱԱԿԱՆՈՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ**

**Հիմնաբառեր՝ Քաղաքական համակարգ, քննկանոն արդիականացում,
քաղաքական սոցիալականացում, հաղորդակցություն, հավաքագրում,
ինքնորոշում**

Համաձայն քաղաքական համակարգի հիմնադիր տեսաբան Դ. Խստոնի (1917-2014) ցանկացած քաղաքական համակարգի արժեքային համակարգն ենթարկվելով արտարին և ներքին ազդեցությունների կերպափոխում է իր «Ելքի» և «մուտքի» արդիականացման մեխանիզմները՝ համաձայն քաղաքական մարտահրավերների: Վերջիններիս վերլուծության, բացահայտման և հավասարարժեք արձագանքի ու պատասխանի համար Դ. Խստոնը առաջարկեց՝ «Ան արկդ»: Նետագայում քաղաքական համակարգի արդիականացման տեսաբաններ Գ. Ալմոնդը, Կ. Շոչը, Թ. Պարսոնը մերժելով խստոնյան «սև արկդը» զարգացրեցին համակարգային մոտեցումը՝ պայմանավորված արդի քաղաքական գործընթացների և փոփոխությունների վերլուծության դերային բազմազանության անհրաժեշտությամբ:

Сурен Петросян

ГОСУДАРСТВЕННОЕ СТРОИТЕЛЬСТВО НКР КАК ЕСТЕСТВЕННЫЙ ПРОЦЕСС МОДЕРНИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОЙ СИСТЕМЫ

Ключевые слова: политическая система, нормальная модернизация, политическая социализация, коммуникация, рекрутинг, самоопределение

Согласно основателю теории политической системы Д. Истону (1917-2014) система ценностей любой политической системы под воздействием внешних и внутренних воздействий, трансформирует его механизмы модернизации «выхода» и «входа» в соответствии с политическими проблемами. Для их анализа, обнаружения, равной реакции и ответа Истон предложил концепцию «черного ящика». Позже, теоретики модернизации политической системы Г. Алмонд, К. Дойч, Т. Парсонс отвергая "черный ящик" Истона разработали системный подход, который обусловлен необходимостью проанализировать текущие политические процессы.

Suren Petrosyan

NKR STATE-BUILDING AS A NORMAL MODERNIZATION PROCESS OF THE POLITICAL SYSTEM

Keywords: *political system, normal modernization, political socialization, communication, recruitment, self-determination*

According to the founding theorist of the political system D Easton (1917-2014) a value system of any political system being affected by external and internal influences, transforms its "exit" and "entrance" mechanisms of modernization according to political challenges. For their analysis, identification, equal reaction and response Easton proposed the concept of "black box." Later, political system modernization theorists G. Almond, K. Deutsch, T. Parsons rejecting Easton's "black box" developed the systematic approach, driven by the need to analyze the current political processes.